



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 նոյեմբերի 2019թ. թիվ 634-Ա

«ՎԱՆԱԶՈՐԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՊՓԲԸ-Ի
ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ՓԱԿԵԼՈՒ ԵՎ «ՎԱՆԱԶՈՐԻ
ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՊՓԲԸ-Ն «ՎԱՆԱԶՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1425-Ն որոշման 1-ին կետի 2)-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջների՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Մինչև ա/թ դեկտեմբերի 31-ը փակել «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տուրերկույոզային բաժանմունքը՝ 15 մահճակալ հզորությամբ: Տուրերկույոզային արտահիվանդանոցային ծառայություններն ապահովելու նպատակով բաժանմունքում առկա լաբորատոր սարքավորումներից՝ անհրաժեշտ սարքավորումները տրամադրել «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին: Ազատել և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնել «Վանա-ձորի ինֆեկցիոն հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության Վանաձոր քաղաքի Նիզամի փողոցի N 53/3 հասցեում գտնվող՝ 383.97 քառ. մետր մակերեսով տարածքով տուրերկույոզային մասնաշենքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 29122016-06-0021): Թույլատրել «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերությանը, ազատվող մասնաշենքի հաշվեկշռային արժեքների չափով, բաժնետոմսերի ձեռքբերման և մարման միջոցով, նվազեցնել ընկերության կանոնադրական կապիտալի չափը: «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի մահճակալների քանակը կրճատել՝ առկա 30 մահճակալից դարձնելով 15 մահճակալ:

2. Մինչև ա/թ դեկտեմբերի 31-ը վերակազմակերպել «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն՝ այն միացնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (արդյունքում՝ 205 մահճակալ):

3. Որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված գործընթացն իրականացնելիս ապահովել «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի մահճակալների համապատասխան անձնակազմի հաստիքների տեղափոխումը «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի վերակազմակերպման գործընթացն ապահովելու նպատակով ծանուցել ամբողջ անձնակազմին աշխատանքային պայմանագրերի լուծարման մասին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին՝

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքացուցակում կատարել փոփոխություններ՝ հաշվի առնելով «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի բուժանձնակազմի տեղափոխման գործընթացը:

6. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ինֆեկցիոն ծառայության համար հարմարեցված՝ անհրաժեշտ տարածքի վերանորոգման աշխատանքներից հետո ինֆեկցիոն ծառայությունը ծավալել «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նորակառույց՝ Գարեգին Նժդեհի փողոցի N 2/42 հասցեում գտնվող շենքում՝ ազատելով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերությունից, համաձայն փոխանցման ակտի, հանձնված Վանաձոր քաղաքի Պարույր Սևակի փողոցի N 51 հասցեում գտնվող՝ 951.69 քառ. մետր մակերեսով տարածքով ինֆեկցիոն մասնաշենքը: Թույլատրել «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ազատվող մասնաշենքի հաշվեկշռային արժեքների չափով, բաժնետոմսերի ձեռքբերման և մարման միջոցով, նվազեցնել ընկերության կանոնադրական կապիտալի չափը:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 8
ք.Վանաձոր